ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/41524-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի (Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1222 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության ավագ մասնագետ
Հեռ. 010 515 403 077 78 78 21
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային ժողովի պատգամավոր Վիլեն Գաբրիելյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում (այսուհետ՝ օրենք) օգտագործվող որոշ հիմնական հասկացությունները, ինչպես նաև ամրագրվում են օրենքում կիրառվող նոր հասկացություններ, մասնավորապես՝ ռազմական նշանակության արտադրանք, ողորկափող հրազեն, ակոսափող հրազեն: Բացի այդ, օրենքի կարգավորման շրջանակից հանվում են ծառայողական զենքին վերաբերող կարգավորումները, իսկ ծառայողական զենք հանդիսացող կարճ-ակոսափող հրազենը դառնում է քաղաքացիական նշանակության զենք, հնարավորություն է տրվում գիտական կազմակերպություններին առանց լիցենզիայի իրականացնել զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

1. **Նախագծի 1-ին հոդվածով** առաջարկվում է օրենքից ընդհանրապես հանել «ծառայողական զենք» հասկացությունը, դրա փոխարեն ներմուծել «քաղաքացիական կարճ ակոսափող հրազեն» հասկացությունը՝ զենքը բաժանելով քաղաքացիական և մարտական տեսակների, իսկ ծառայողական զենք հանդիսացող կարճ ակոսափող հրազենը դարձնել քաղաքացիական նշանակության զենք: Նախագծի հիմնավորումներում այս փոփոխությունը փաստարկվել է ընդամենը նպատակահարմարությամբ, նշելով, որ «ծառայողական զենքը տարբերվում է մարտական և քաղաքացիական զենքից ընդամենը փամփուշտների տարբերությամբ և կրակահերթով կրակելու հնարավորության բացակայությամբ»:

Վերոգրյալ հատկանիշներով պայմանավորված ծառայողական զենքը տարբերվում է մարտական զենքից, սակայն հարկ է նշել, որ երկուսն էլ ունեն բազմաթիվ ընդհանրություններ: Ինչ վերաբերում է քաղաքացիական զենքի հետ համեմատությանը, ապա պետք է նշել, որ ծառայողական զենքն ունի բազմաթիվ տարբերություններ, ինչով էլ

պայմանավորված օրենքի 4-րդ հոդվածով սահմանված են քաղաքացիական զենքի տեսակները: Օրենքի 4-րդ հոդվածի թվարկումից պարզ է դառնում, որ ծառայողական զենքը քաղաքացիական զենքից միայն փամփուշտներով և կրակահերթով կրակելու հնարավորության բացակայությամբ չի տարբերվում: Այստեղ շատ ավելի դյուրին է թվարկել տարբերությունները, քան նմանությունները, այդ թվում և այն հանգամանքը, որ պետության կողմից պետական ծառայողներին ծառայողական զենք տրամադրելը լրացուցիչ երաշխիք է հանդիսանում իրենց առջև դրված խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն, և ընդունված ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխանի ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից կնքված պայմանագրերին: Ուստի, «ծառայողական զենք» հասկացությունն օրենքում «քաղաքացիական կարճ ակոսափող հրազեն» հասկացությամբ փոխարինելու դեպքում խոչընդոտներ կառաջանան քաղաքացիական և ծառայողական զենքի ներկրման և արտահանման ժամանակ: Մասնավորապես, Եվրասիական տնտեսական միության բարձրագույն խորհրդի 16. 08. 2012 թ. թիվ 134 որոշման հիման վրա ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1301-Ն որոշումը, որի N 2 հավելվածով հաստատված են սահմանափակումների ենթակա քաղաքացիական և ծառայողական զենքի, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերի ու փամփուշտների անվանումների ցանկը, ինչպես նաև ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի 2.22-րդ կետով նշված ապրանքների ծածկագրերը:

Վերոգրյալ հիմնավորումներով պայմանավորված՝ առաջարկվում է ծառայողական զենքի հասկացությունը թողնել գործող խմբագրությամբ:

2. **Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝**

1) 1-ին կետով սահմանվում է «ռազմական նշանակության արտադրանք» հասկացությունը, ինչպես նաև նախագծով նախատեսվում են ռազմական նշանակության արտադրանքին վերաբերող մի շարք կարգավորումներ: Հարկ է նշել, որ ռազմական նշանակության արտադրանքին վերաբերող կարգավորումները դուրս են օրենքի կարգավորման շրջանակներից: Ուստի, առաջարկվում է դրանք հանել նախագծից.

2) 3-րդ կետով նախատեսվում է սահմանել **ձեռքի հրաձգային զենքի** հասկացությունը, որը հետագա կարգավորումներում կիրառվում է որպես **հրազեն**: Այս

կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործող օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներում կիրառվում է «**ձեռքի մարտական հրաձգային զենք**» հասկացությունը, որն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով հետագա կարգավորումներում կիրառվում է որպես **մարտական զենք**: Նշվածը հիմք ընդունելով և նկատի ունենալով, որ նախատեսված կարգավորումների արդյունքում կառաջանան հակասություններ՝ անհրաժեշտ է հասկացությունները համապատասխանեցնել միմյանց:

Բացի այդ, օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հրազենը վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին (ուղղորդված շարժում ստացած նետվող առարկայի միջոցով) տարածության վրա գտնվող կենդանի կամ այլ նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք է, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, իրանը, փողատուփը, թմբուկը, փակաղակը, ձգանահարվածային մեխանիզմը: Մինչդեռ, նախագծի 2-րդ հոդվածով օրենքում նոր խմբագրությամբ նախատեսված 2-րդ հոդվածով հրազենի առանձին, միասնական հասկացությունը ներկայացված չէ, այլ միայն դրա 1-ին մասի 3-րդ կետում սահմանվել է «ձեռքի հրաձգային զենք» հասկացությունը, որը տառացիորեն նույնական է օրենքով «հրազեն» հասկացության ձևակերպման հետ, իսկ «ձեռքի հրաձգային զենք» բառերից հետո փակագծերում նշվել են «այսուհետ՝ հրազեն» բառերը: Այսպիսով՝ նախագծի ձևակերպումից հասկանալի է դառնում, որ «հրազեն» հասկացությունը օրենքի ձևակերպումից բացի լրացվել է նրանով, որ այն պետք է լինի միայն ձեռքի հրաձգային զենք:

Այնուհետև, նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով ներկայացված են հրազենի տեսակները՝ կարճ ակոսափող հրազեն, ողորկափող հրազեն, ակոսափող հրազեն, որոնք ըստ էության ձեռքի հրազենային զենքեր են: Նշենք, որ նախագծի 2-րդ հոդվածով օրենքում նոր խմբագրությամբ նախատեսված 2-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետում «հրազեն» բառի նշումով ներկայացված է նաև «սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն» հասկացությունը, որը «ձեռքի հրաձգային զենք» հասկացությունից տարբերվում է միայն կենդանի նշանակետի խոցման և միայն արկով խոցելու հնարավորությամբ: Հաշվի առնելով, որ «սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենի» բացատրության մեջ բացակայում է «հրազեն» բառը՝ հասկանում ենք, որ սա նախագծի իմաստով ձեռքի հրաձգային զենքի (այսինքն՝ հրազենի) տեսակ չի հանդիսանում: Այլ կերպ՝ սահմանափակ խոցելիությամբ հրազենը հրազեն չէ:

Նախագծի վերոնշյալ ձևակերպումներն իրենց բարդության և անհստակության պատճառով իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջացնել շփոթմունք, մասնավորապես՝ այդ հասկացություններում նշված առարկաների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկելու, քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանցավոր արարքներին իրավական գնահատական տալու ընթացքում:

Առաջարկում ենք նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. «հրազեն» հասկացությունը նշել առանձին, ինչպես նախատեսված է օրենքով, ընդհանրական և համապարփակ ձևակերպումով, որտեղ կնշվեն ինչպես դրա տեսակների, այնպես էլ սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենի հատկանիշները, կամ

բ. նախագծի 2-րդ հոդվածով օրենքում նոր խմբագրությամբ նախատեսված 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հրազեն» հասկացությունը ոչ թե նշել փակագծերի մեջ, այլ ուղիղ կերպով շարադրել դրա բովանդակությունը՝ բոլոր հատկանիշների հետ մեկտեղ նշելով «ձեռքի հրազենային զենք» հանդիսանալու հանգամանքը, կամ

գ. նախագծի 2-րդ հոդվածով օրենքում նոր խմբագրությամբ նախատեսված 2-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով նախատեսված «սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն» հասկացությունը շարադրել այնպիսի հատկանիշներով, որոնք հնարավորություն կընձեռեն այն տարանջատել նախագծի 2-րդ հոդվածով օրենքում նոր խմբագրությամբ նախատեսված 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված «ձեռքի հրաձգային զենք» (հրազեն) հասկացությունից.

3) 8-րդ կետի համաձայն՝ նետողական զենքը՝ սարք է, որը նախատեսված է մարդու մկանային ուժի կամ մեխանիկական սարքի օգնությամբ նպատակաուղղված շարժում ստացող՝ նետման համար հարմարեցված առարկաների (այսուհետ՝ նետվող հարմարանք) միջոցով հեռավորության վրա գտնվող **մարդուն կամ այլ կենդանի կամ այլ նշանակետ** խոցելու և վնասազերծելու համար: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **զենքը՝ սարք կամ առարկա է, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ** խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար: Նշվածը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք «մարդուն կամ այլ» բառերը հանել.

4) 10-րդ և 36-րդ կետերով սահմանված են համապատասխանաբար՝ «օդաճնշիչ սարք» և «էլեկտրահարող սարք» հասկացությունները, սակայն կարգավորված չեն, թե դրանք

զենքի որ տեսակին են դասվում: Հարկ է նշել, որ նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սպառիչ կերպով նշված են քաղաքացիական զենքի տեսակները: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, թե որ զենքներն են համարվում մարտական, որի համաձայն՝ մարտական է համարվում այն զենքը, որը նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար և օրենսդրությանը համապատասխան ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ, **բացառությամբ քաղաքացիական զենքի: Մարտական զենքը քաղաքացիական զենքից տարբերվում է քաղաքացիական զենքի տեսակների՝ սույն օրենքով սահմանված չափանիշներից և կրակահերթով կրակելու հնարավորությամբ:** Հաշվի առնելով նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը՝ օդաճնշիչ և էլեկտրահարող սարքերը չեն կարող հանդիսանալ մարտական զենք: Ուստի, առաջարկում ենք քննարկել նախագծի 4-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարելու և դրանք որպես քաղաքացիական զենք նախատեսելու հարցը:

Վերոգրյալ առաջարկությունը պայմանավորված է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 21.04.2015 թ. «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» N 30 որոշման կարգավորմամբ, որի «Ծառայողական և քաղաքացիական զենք, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու դրանց փամփուշտները» վերտառությամբ N 2 հավելվածի 2.22-րդ բաժնի 4-րդ և 32-րդ կետերի համաձայն՝ քաղաքացիական և (կամ) ծառայողական զենք է համարվում նաև.

«4. անփող հրազենը (ռևոլվերներ և ատրճանակներ, այդ թվում՝ վնասվածքային ազդեցության փամփուշտներով) (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 9302 00 000 0-ից),

32. էլեկտրական զենքը (էլեկտրահարող սարքվածքներ և կայծային պարպիչներ, որոնք ունեն Եվրասիական տնտեսական միության անդամ պետության՝ առողջապահության ոլորտում լիազոր մարմնի կողմից սահմանված նորմերին համապատասխանող ելքային պարամետրեր) (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 9304 00 000 0-ից):».

5) 17-րդ կետում «իրավաբանական անձի գտնվելու վայրում» բառերը փոխարինել «իրավաբանական անձի կողմից զենք պահելու զետեղարանում» բառերով.

6) 20-րդ կետից առաջարկում ենք հանել «զենքի նմանակ» ձևակերպումը, քանի որ պարզ չէ, թե որն է համարվում զենքի նմանակ.

7) 40-րդ կետով նախատեսվել է պետական ռազմականացված կազմակերպությունների հասկացությունը: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ օրենքի

գործող խմբագրության համաձայն՝ որպես պետական ռազմականացված կազմակերպություն սահմանված է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունը, մինչդեռ նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում նշված մարմինը բացակայում է տվյալ հասկացությունից, ինչն ունի հիմնավորման կարիք.

8) 43-րդ կետը «քաղաքացիական» բառից հետո լրացնել «զենքի ու դրա փամփուշտների համապատասխանության գնահատման փաստաթղթի (համապատասխանության սերտիֆիկատի) տրամադրմամբ հավաստվում է համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին» բառերով.

9) 44-րդ կետում «գնահատման մարմնի տված փաստաթուղթ» բառերը փոխարինել «գնահատման մարմնի կողմից տրված համապատասխանության գնահատման փաստաթուղթ (համապատասխանության սերտիֆիկատ)» բառերով.

10) օրենքը լրացնել նոր «երկարափող հրազեն» հասկացությամբ, քանի որ նշված չեն երկարափող հրազենի հատկանիշները և բնութագրերը, մինչդեռ օրենքի 7-րդ հոդվածում նշված են երկարափող հրազենին ներկայացվող սահմանափակումները:

3. **Նախագծի 4-րդ հոդվածի** 2-րդ կետով շարադրվող 2-րդ մասի՝

1) 8-րդ կետը «սառը զենք» բառերից հետո լրացնել հետևյալ «(90 մմ և ավել երկարության շեղբով կամ սայրով)» բառերով.

2) 9-րդ կետը «նետողական զենք» բառերից հետո լրացնել «(աղեղներ՝ 27 կգ/ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող և արբալետներ՝ 43 կգ/ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող)» բառերով, ինչը սահմանված է համապատասխան ստանդարտներով:

4. **Նախագծի 5-րդ հոդվածը՝**

1) նախագծի 5-րդ հոդվածն ու դրանով պայմանավորված մյուս փոփոխություններն ամբողջությամբ վերանայման կարիք ունեն: Մասնավորապես, օրենքի խմբագրվող 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարճ ակոսափող հրազենը, որը սահմանվում է որպես քաղաքացիական զենքի տեսակ, նախատեսված չէ քաղաքացիների կողմից պահելու, կրելու կամ օգտագործելու համար, մինչդեռ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ քաղաքացիական զենքը նախատեսված է քաղաքացիների ինքնապաշտպանության,

սիրողական և սպորտային հրաձգության, որսորդության, սպորտային ու մշակութային միջոցառումների ընթացքում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում օգտագործելու համար: Բացի այդ, ակնհայտ է, որ քաղաքացիական կարճ ակոսափող հրազենի ներքո հիմնականում հասկացվում է գործող օրենքով նախատեսված ծառայողական զենքը, մինչդեռ դրա և նախագծով նախատեսվող քաղաքացիական կարճ ակոսափող հրազենին վերաբերող իրավակարգավորումներում էական բովանդակային տարբերություններ չկան: Այս կապակցությամբ անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորել քաղաքացիական զենքի տեսակների մեջ ըստ էության ծառայողական զենք համարվող հրազենը ներառելու նպատակն ու անհրաժեշտությունը:

Միաժամանակ, խմբագրվող 5-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների համատեքստում, այդ թվում՝ հաշվի առնելով օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված արգելքը, նախագծով առաջարկվող մոտեցումն իմաստազրկվում է:

Բացի այդ, առանց սկզբունքային այլ փոփոխությունների, միայն զենքի նշված տեսակի անվանումն ու դասակարգումը փոխելու պարագայում կարող են գործնականում խնդիրներ առաջանալ նաև դրա արտահանման և ներմուծման գործընթացներում՝ հաշվի առնելով ԵԱՏՄ գործող իրավակարգավորումները.

2) 2-րդ մասում նախատեսված «փոխգնդապետ» զինվորական կոչումն առաջարկվում է փոխարինել «մայոր» զինվորական կոչմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի համաձայն՝ ավագ սպայական կազմի համար սահմանված է նաև «մայոր» զինվորական կոչումը:

Բացի այդ, օրենքի, ինչպես նաև նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող կարգավորումների պարագայում զենք ձեռք բերելու իրավունքից զրկված են մի շարք ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ քննիչները, դատախազները, որոնց աշխատանքային ստաժը զինվորական ծառայության ստաժ չի համարվում: Մինչդեռ, Հակակոռուպցիոն կոմիտեն, Քննչական կոմիտեն և Դատախազությունը օրենքով հանդիսանում են պետական ռազմականացված կազմակերպություններ, որոնց ծառայողները ծառայության ընթացքում ունեն զենք, այդ թվում՝ մարտական զենք պահելու, կրելու իրավունք:

Հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն, բացի քննչական ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողներից, ունի նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ծառայողներ: Այս պարագայում առաջարկվում է քննարկել, թե ինչու պետք է զինվորական ծառայության 20 տարվա ստաժ ունեցող մյուս մարմինների ծառայողները հնարավորություն ունենան զենք ձեռք բերելու՝ պահելու և կրելու իրավունքով, իսկ քննչական ծառայության պաշտոնյաները, դատախազները և Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթ իրականացնող պաշտոնյաները զրկված լինեն նման իրավունքից: Նախագծի հիմնավորումներում նշված «երկարամյա ծառայության փորձը, զենքի հետ վարվելու ունակությունները, պատասխանատվությունը», որպես այդ իրավունքով օժտելու հիմք, վերաբերելի է նաև քննիչներին, դատախազներին, Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ աշխատակիցներին: Ուստի, առաջարկում ենք՝ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել այնպես, որ զենք ձեռք բերելու իրավունք ունենան նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գործող և նախկին ծառայողները (այդ թվում՝ ինքնավար և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոն զբաղեցնող և զբաղեցրած անձինք), ՀՀ քննչական կոմիտեի գործող և նախկին ծառայողները, ՀՀ դատախազության գործող և նախկին աշխատակիցները:

Այս առումով առաջարկում ենք նախագծի կարգավորումներն այնպես խմբագրել, որ 20-ամյա ստաժի մեջ հաշվարկվեն ոչ միայն զինվորական ծառայության, այլև վերը նշված մարմինների պաշտոններում պաշտոնավարման ժամկետները՝ այդ ժամկետներն իրար գումարելով 20-ամյա ստաժի պահանջն ապահովելու հնարավորությամբ, ինչպես նաև՝ այս համատեքստում անհրաժեշտ է զինվորական կոչման հետ կիրառել նաև դասային աստիճան հասկացությունը:

Միաժամանակ, առաջարկվում է ծառայողական զենք բերելու իրավունք վերապահել այն անձանց, ովքեր ծառայության ընթացքում ունեցել են զենք պահելու և կրելու իրավունք: Առաջարկվում է նաև նախատեսել դրույթներ, որոնցով լիազորություն կվերապահվի ՀՀ կառավարությանը կամ պետական մարմնի ղեկավարին սահմանելու կարգ՝ պետական մարմիններում և կազմակերպություններում զենք պահելու և կրելու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց հրազեն հատկացնելու վերաբերյալ.

3) օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մասը նախատեսում է, որ պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայողական զենքի շրջանառության կարգը սահմանում է Կառավարությունը:

Հարկ է նկատել, որ թեպետ նախագծով ընդհանուր առմամբ պահպանվել են օրենքի 5-րդ հոդվածի կարգավորումները, սակայն առաջարկվող կարգավորումներից դուրս է մնացել օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մասը: Ուստի անհասկանալի է, թե նախագծի ընդունումից հետո ով է սահմանելու պետական ռազմականացված կազմակերպություններում քաղաքացիական կարճ ակոսափող հրազենի շրջանառության կարգը:

Առաջարկում ենք՝ նախագծի 5-րդ հոդվածում լրացում կատարել այն հաշվարկով, որ նախագծի ընդունման պարագայում ևս վերը նշված կարգը սահմանվի Կառավարության կողմից՝ հաշվի առնելով հենց քաղաքացիական կարճ ակոսափող հրազենի առանձնահատկությունները:

Հարկ է նկատել, որ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական ռազմականացված կազմակերպություններում մարտական զենքի շրջանառության կարգը սահմանում է Կառավարությունը: Քանի որ քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը (գործող օրենքում՝ ծառայողական զենքը) իր հատկանիշներով առավել ընդհանրական է մարտական զենքի հետ, քան քաղաքացիականը, հենց այս տրամաբանությամբ էլ գործող օրենքով դրա շրջանառության կարգի սահմանումը վերապահվել է Կառավարությանը: Առաջարկում ենք պահպանել այդ դրույթը:

Բացի այդ, նախագծի 5-րդ հոդվածի համաձայն խմբագրվող օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել «անձնական օգտագործման համար» արտահայտության իմաստը, քանի որ օրենքում օգտագործվող հասկացություններում այն բացահայտված չէ: Առաջարկվում է պահպանել օրենքի գործող կարգավորումը:

5. **Նախագծի 6-րդ հոդվածով** օրենքի 6-րդ հոդվածի խմբագրվող 1-ին մասում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ոչ բոլոր մարտական զենքերն ունեն կրակահերթով կրակելու հնարավորություն (մասնավորապես, մի շարք պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինություններում առկա են դիպուկահար հրացաններ), հետևաբար նշված պայմանն անհրաժեշտ է վերանայել՝ պահպանելով դրույթի գործող խմբագրությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարտական զենք է համարվում ռազմական նշանակության այն արտադրանքը, որը, օրենսդրությանը համապատասխան, ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ և նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար: Նույնական կարգավորում է նախատեսված նաև նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով խմբագրվող դրույթներով, որոնց համաձայն՝ մարտական զենքը նույնպես նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար: Հետևաբար, պետական ռազմականացված այն կազմակերպությունները, ի թիվս ՀՀ քննչական կոմիտեի, որոնց առջև օրենսդրությամբ դրված չեն մարտական խնդիրների լուծման գործառույթներ, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն չեն կարող ունենալ մարտական զենք, քանի որ չեն իրականացնում միաժամանակ մարտական և օպերատիվ-ծառայողական գործառույթներ:

Միաժամանակ, առաջարկվում է առանձնահատուկ ծառայողական գործառույթների իրականացման ընթացքում, մասնավորապես, սահմանամերձ տարածքում դեպքի վայրի զննություն կատարելիս, Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների համար՝ ծառայողական խնդիրները լուծելու նպատակով, նախատեսել մարտական զենք (ինքնաձիգ) պահելու և կրելու հնարավորություն:

6. **Նախագծի 7-րդ հոդվածի՝**

1) 6-րդ կետով օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ կետի «**սառը զենք, դանակ կամ դաշույն**» ձևակերպումն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, համաձայն որի՝ **սառը զենքը՝ կտրող, ծակող**, ջարդող սարք է, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջապես շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար: Նշված հասկացությունից բխում է, որ դանակը և դաշույնը ևս կարող են դիտվել որպես սառը զենք, ուստի նման տարանջատում կատարելն անհասկանալի է: Բացի այդ, անհրաժեշտ է «**90 մմ-ից**» բառերից առաջ լրացնել «**12)**» թիվը.

2) 9-րդ կետով օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչելը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ նշված արգելքը վերաբերում է

ինքնապաշտպանության նպատակով **ցանկացած տեսակի սառը զենք կրելուն**, մինչդեռ նույն մասի 5-րդ կետի արգելքը վերաբերում է **բացառապես քաղաքացիական զենքին.**

3) առաջարկվում է օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) 400 մմ-ից պակաս երկարություն ունեցող ողորկ փողով կամ փողային տուփով և փողով, 300 մմ-ից պակաս երկարություն ունեցող ակոսավոր փողով, և 800 մմ-ից պակաս ընդհանուր երկարություն ունեցող ակոսափող կամ ողորկափող երկարափող հրազեն, ինչպես նաև այնպիսի կառուցվածքով երկարափող հրազեն, որը թույլ է տալիս դրա երկարությունը կարճացնել 800 մմ-ից՝ առանց կրակ արձակելու ունակության կորստի.»:

Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շարադրված սահմանափակումները հստակ և կոնկրետ չեն, հոդվածում մի դեպքում նշվում է երկարափող հրազենի մասին, մյուս դեպքում օգտագործվում է միայն հրազեն հասկացությունը, պարզ չէ, թե այդ սահմանափակումներից որն է վերաբերում ակոսափող հրազենին, որը՝ ողորկափող հրազենին, և ըստ այդմ էլ հասկանալի չէ կարճ ակոսափող հրազենը որպես բացառություն նշելու անհրաժեշտությունը:

7. **Նախագծի 10-րդ հոդվածի՝**

1) 2-րդ կետը հանել, քանի որ Իրավաբանական անձանց տրվում են թույլտվություններ ինչպես զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի ձեռքբերման, ներկրման, արտահանման, տարանցիկ փոխադրման համար, այնպես էլ փամփուշտների համար.

2) 6-րդ կետը «քաղաքացու մշտական» բառերից հետո լրացնել «կամ ժամանակավոր» բառերով.

3) 8-րդ կետում «եթե տվյալ պահին իր անունով հաշվառված զենք չունի» նախադասությունը» բառերը փոխարինել «եթե տվյալ պահին չունի զենք պահելու և կրելու կամ զենքի հավաքածու կազմելու թույլտվություն» բառերը» բառերով՝ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան:

8. **Նախագծի 11-րդ հոդվածի՝**

1) 2-րդ կետի «հանել» բառն անհրաժեշտ է փոխարինել «ուժը կորցրած ճանաչել» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը.

2) 3-րդ կետով լրացվող 1.1-ին մասում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով, բացի այդ՝

ա. 2-րդ կետում «հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատություններում» բառերը փոխարինել «հոգեբուժական կամ թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում» բառերով,

բ. առաջարկվում է 5-րդ կետը համապատասխանեցնել սույն առաջարկների 11-րդ կետի 3-րդ ենթակետով ներկայացված (օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի վերաբերյալ) խմբագրությանը.

3) 5-րդ կետով նախատեսված լրացման արդյունքում օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում կկիրառվի «դադարեցման կասեցման» ձևակերպումը: Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջները՝ անհրաժեշտ է «կասեցման» բառից առաջ լրացնել համապատասխան շաղկապ:

9. **Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝**

1) 1-ին կետի «գործողությունները» բառն անհրաժեշտ է փոխարինել «գործողությունը» բառով՝ նկատի ունենալով, որ կառաջանա ինկորպորացման անհնարինություն, քանի որ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված ձևակերպումը չի կիրառվում.

2) 5-րդ կետում «զենքի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Զենքի,» բառով և կետադրական նշանով:

10. **Նախագծի 13-րդ հոդվածում** առաջարկվում է լրացնել նոր դրույթ, որով կհստակեցվի օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, մասնավորապես՝ պետական ռազմականացված կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ևս զենք ձեռք բերելու իրավունք կվերապահվի: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող իրավակարգավորումը տարբեր գերատեսչությունների կողմից տարաբնույթ մեկնաբանման տեղիք է տալիս, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նշված նորմի տառացի

մեկնաբանումից, ստացվում է, որ պետական ռազմականացված կազմակերպություններին իրավունք է վերապահված զենք ձեռք բերել միայն ՀՀ տարածքում:

11. **Նախագծի 15-րդ հոդվածի՝**

1) 1-ին կետից հետո լրացնել նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1.1) «ձեռք բերել» բառերից հետո լրացնել «առավելագույնը» բառը».

2) 2-րդ կետով փոփոխվող՝ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի խմբագրությունն առաջարկվում է վերանայել՝ պահպանելով նաև տեսական քննությունից ազատվելու վերաբերյալ կարգավորումը պետական ռազմականացված կազմակերպություններում տվյալ պահին ծառայող և արդեն իսկ զենք պահելու և կրելու իրավունք ունեցող անձանց մասով: Միաժամանակ, 2-րդ կետի վերջում առաջարկվում է լրացնել «նախադասությամբ» բառը.

3) նախագծի 15-րդ հոդվածով փոփոխվող օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) այն անձանց, որոնց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում դիտավորյալ կամ զենքի օգտագործմամբ անզգուշությամբ կատարված հանցագործություն կատարելու համար (մինչև **տվյալ անձի նկատմամբ** ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը կամ արդարացման դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը).»:

12. **Նախագծի 17-րդ հոդվածի** 2-րդ կետով լրացվող 3-րդ մասով նախատեսվում է գիտական կազմակերպությունների կողմից զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների և ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում իրականացնելու հնարավորություն՝ առանց զենքի արտադրության լիցենզիայի: Նշված կարգավորումները դուրս են օրենքով կարգավորվող հարաբերությունների տրամաբանությունից: Ուստի առաջարկվում է նշված կարգավորումները հանել նախագծից:

13. **Նախագծի 18-րդ հոդվածի՝**

1) 2-րդ կետը «մեկ միավոր հրազենի» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «,» նշանով.

2) լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«4) 9-րդ մասում «տարեկան» բառից հետո լրացնել «առավելագույնը» բառը:

Միաժամանակ, օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **տեխնիկական կանոնակարգին համապատասխան**՝ մինչև 7.5 ջոուլ փողային էներգիայով օդաճնշիչ սարքը (այդ թվում՝ ռևոլվերները), դրանց փամփուշտները, մեխանիկական փոշեցրիչները, աերոզոլային և այլ սարքերը, որոնք լիցքավորված են արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով, էլեկտրահարող սարքերն ու կայծային պարպիչները, ինչպես նաև կառուցվածքով զենքի նմանվող իրերը և զենքի պարագաները Հայաստանի Հանրապետություն ներկրվում, արտահանվում և **շրջանառվում են ազատ**:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ վերը նշված սարքերը, իրերն ու պարագաները հաշվառման ենթական չեն, **և դրանք վաճառելու իրավունք ունեն միայն քաղաքացիական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:**

Գտնում ենք, որ անհրաժեշտ է նշված առարկաների ազատ շրջանառությունը բացառել՝ հաշվի առնելով, որ ներկայումս լայն տարածում է գտել հատկապես անչափահասների կողմից տարբեր ինտերնետային կայքերի միջոցով նշված առարկաների, մասնավորապես՝ էլեկտրահարող սարքերի, կայծակնային պարպիչների կամ աերոզոլային սարքերի ձեռքբերումը, որոնցից ոչ բոլորը կարող են համապատասխանել տեխնիկական կանոնակարգերին, ավելին, կարող են իրենցից վտանգ ներկայացնել, հետևաբար՝ դրանց վաճառքը սահմանափակելը, կանոնակարգելը և միայն համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց վերապահելը խիստ նպատակահարմար է:

14. **Նախագծի 19-րդ հոդվածի՝**

1) 7-րդ կետով նոր նախադասություն լրացնելն անհրաժեշտ է վերանայել և նախատեսված լրացումը կատարել որպես առանձին կետ, կամ «հրազենի» բառից առաջ լրացնել «, իսկ» կետադրական նշանով և բառով.

2) 8-րդ կետը «քաղաքացիական» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «1)» թվով:

15. **Նախագծի 24-րդ հոդվածի** 1-ին մասով կատարվող փոփոխությամբ հնարավորություն է ընձեռվում զենքով պարգևատրվելու ոչ թե 21 տարին լրացած, այլ 18 տարին լրացած անձանց:

Հարկ է նկատել, որ նախագծի հիմնավորումներում որևէ կերպ պատճառաբանված չէ տարիքային այդ շեմն իջեցնելու անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը:

Կարծում ենք՝ առնվազն անհասկանալի է դեռևս ժամկետային զինվորական ծառայություն չանցած քաղաքացուն, օրենսդրությամբ երեխա համարվելու տարիքից դուրս գալու հաջորդ օրվանից զենքով պարգևատրվելու հնարավորություն նախատեսելը:

Ուստի, առաջարկում ենք հանել այս փոփոխությունը նախագծից՝ պահպանելով գործող կարգավորումները:

16. **Նախագծի 26-րդ հոդվածի՝**

1) 2-րդ կետում «նախադասությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառերը» բառով, իսկ նույն հոդվածի 4-րդ կետում «նախադասությունը» և «նախադասությամբ» բառերը համապատասխանաբար՝ «բառերը» և «բառերով» բառերով.

2) 3-րդ կետից հետո լրացնել նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3.1) 10-րդ մասում «գործունեության վայրի» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ զենք պահելու զետեղարանի» բառերը, իսկ «քաղաքացին իր» բառերից հետո լրացնել «մշտական կամ ժամանակավոր» բառերը».

3) օրենքի 12-րդ մասը «պարպիչները,» բառից հետո առաջարկվում է լրացնել «մինչև 27 կգ/ուժ (ներառյալ) ձգողության ուժ ունեցող աղեղները, մինչև 43 կգ/ուժ (ներառյալ) ձգողության ուժ ունեցող արբալետները,» բառերով:

17. **Նախագծի 28-րդ հոդվածի՝**

1) 2-րդ կետը «ուսումնական» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «,» կետադրական նշանով, իսկ նույն մասի 3-րդ կետի «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով:

18. **Նախագծի 29-րդ հոդվածի՝**

1) 1-ին մասի «օրը» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրվանից» բառով՝ նկատի ունենալով փաթեթով ներկայացված մյուս նախագծերի համար նախատեսված ուժի մեջ մտնելու ժամկետը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց **պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից**, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես.

2) 2-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետին:

19. Միաժամանակ, առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածում նախատեսել դրույթ, որով օրենքի 10-րդ հոդվածում կլրացվի նոր կարգավորում այն մասին, որ սահմանված կարգով տրամադրված **լիցենզիաների պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացնի լիցենզիա տրամադրող պետական մարմինը,** հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (հոդված 193.3) պատասխանատվություն է նախատեսված քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր **պահանջները կամ պայմանները խախտելու համար:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախագծի 9-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) լրացնել նոր 11-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Սույն օրենքով նախատեսված լիցենզիաների պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիցենզիա տրամադրող պետական մարմինը:»:

Հարկ է նշել, որ հիշյալ առաջարկությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանալու նաև փոփոխություն կատարելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում (հոդված 193.3), քանի որ նշված հոդվածի դիսպոզիցիայում օգտագործվում է «Քաղաքացիական և ծառայողական զենքի» ձևակերպումը, մինչդեռ նախագծին կից ներկայացված հարակից օրենքների նախագծերի փաթեթում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախատեսող օրենքի նախագծում 193.3-րդ հոդվածին անդրադարձ չի կատարվում:

20. Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ հրաձգության հրահանգչին անհրաժեշտ որակավորում տրվում է հրաձգության հրահանգիչների համար ուսուցում անցած և քննություն հանձնած անձին: Հարկ է նշել, որ ներկայումս իրավակիրառ պրակտիկայում առաջանում են խնդիրներ՝ կապված հրաձգության հրահանգչի որակավորման համար ներկայացվող՝ ուսուցումը հավաստող փաստաթղթերի շրջանակի հետ:

Ուստի առաջարկվում է խնդրի լուծման նպատակով նախատեսել համապատասխան իրավակարգավորումներ:

21. Նախագծի շրջանակներում առաջարկվում է քննարկել օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասում զենքով պարգևատրված անձանց մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների առկայության դեպքում որպես պարգև տրված զենքը մալելու և նշված անձանց վերադարձնելու մասին կարգավորումներ նախատեսելու հնարավորությունը:

Հարկ է նկատել նաև, որ նախագծով առաջարկվող փոփոխությունների (ինչպես այս, այնպես էլ մնացած) հիմնավորումները հիմնականում ներկայացված չեն նախագծի հիմնավորումներում:

22. Հաշվի առնելով Ներքին գործերի նախարարությունում ստացված դիմում-առաջարկները, առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դեսպանների անվտանգությունն ապահովող և դեսպանատան աշխատակից համարվող ՀՀ քաղաքացիների համար նախատեսել զենք պահելու և կրելու թույլտվության հնարավորություն:

23. Առաջարկվում է օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով (Զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայության վերաբերյալ համապատասխան բժշկական հետազոտության արդյունքները բժշկական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանություն էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ փոխանցելու նպատակով ծրագրային ապահովում իրականացնելու համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո) նախատեսված ժամկետը փոխարինել ավելի երկար ժամկետով՝ ծրագրատեխնիկական լուծումների միջոցով համապատասխան հարթակին ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասանելիությունն ապահովելու համար:

24. Առաջարկվում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանելիս նկատի ունենալ, որ ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի ընդունման համար անհրաժեշտ կլինի առնվազն 6-ամսյա ժամկետ՝ հաշվի առնելով օրենքից բխող իրավական ակտերի ծավալը: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև օրենքի նախագծի և ենթաօրենսդրական իրավական ակտերի համաժամանակյա ուժի մեջ մտնելու կարևորությունը՝ օրենքի դրույթներն իրավակիրառ պրակտիկայում կենսագործելու նպատակով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Առաջարկվում է հանել նախագծի 3-րդ հոդվածը, իսկ ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1) նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է ավելացնել տուգանքի չափը, մինչդեռ նախատեսված փոփոխությունը որևէ կերպ հիմնավորված չէ, ուստի հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասը՝ անհրաժեշտ է փոփոխությունը հիմնավորել: Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում տուգանքի չափը «առավելագույնը քսանապատիկի» չափից դարձնել «առավելագույնը հարյուրհինսնապատիկ», իսկ 2-րդ մասի սանկցիայում՝ «տասնապատիկից երեսնապատիկի» չափը դարձնել «հարյուրհինսնապատիկից երեք հարյուրապատիկ»:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվածը ոչ մեծ ծանրության հանցանք է, իսկ 2-րդ մասով նախատեսվածը միջին ծանրության:

ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տուգանքը որպես հիմնական պատիժ սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի հնգապատիկից հինսնապատիկի չափով:

Ակնհայտ է, որ տուգանքի չափերի մասով նախագիծ 2-ով առաջարկվող կարգավորումը հակասում է օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներին:

Բացի օրենսգրքին հակասելուց, խստության առումով ևս պետք է նկատել, որ տուգանքի չափն օրենսգրքով չի հաշվարկվում հիմք ընդունելով տուգանքի բազային գումար 1000 դրամը, այլ հաշվարկվում է հիմք ընդունելով անձի ամսական եկամուտը, իսկ դրա բացակայության դեպքում նվազագույն աշխատավարձի չափը: Ստացվում է, որ

սանկցիայում նշված երեք հարյուրապատիկը ոչ թե 300.000 դրամ է, այլ 300-ի և 75.000-ի բազմապատիկը, այսինքն՝ 22.500.000 դրամը:

Դժվար է որևէ հիմնավորում գտնել խմբով սառը զենք՝ դանակ, տանը պահելու համար մինչև 22,5 մլն դրամի տուգանք նախատեսելու համար:

Նույն խնդիրներն առկա են նաև այս հոդվածի սանկցիայում առաջարկվող հանրային աշխատանքների չափերի կապակցությամբ:

Այսպիսով՝ առաջարկում ենք վերանայել վերոնշյալ արարքների համար քրեական քաղաքականության խստացման վերաբերյալ առաջարկների նպատակահարմարությունը, իսկ դրանք նպատակահարմար դիտարկելու դեպքում՝ սանկցիաները խմբագրել օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Բացի այդ, 1-ին հոդվածով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով սահմանել քրեական պատասխանատվություն գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ապօրինի ոչ միայն կրելու, այլև ձեռք բերելու, իրացնելու, փոխադրելու, առաքելու կամ պահելու համար, մինչդեռ գտնում ենք, որ նշված շրջանառության տեսակների վտանգավորության աստիճանն ավելի ցածր է, քան կրելու դեպքում: Հարկ է նշել, որ քրեական վարույթների քննության ընթացքում առավել հաճախ կատարվող քննչական գործողության՝ բնակարանների, տրանսպորտային միջոցների և «բնակարան» հասկացության տակ մտնող մյուս բոլոր վայրերում կատարվող խուզարկությունների ընթացքում օբյեկտիվորեն կարող են հայտնաբերվել բազմաթիվ սառը կամ նետողական զենքեր, և այդ պայմաններում դրանք տնօրինող անձանց քրեական հետապնդման ենթարկելն իրատեսական չէ: Միաժամանակ, առաջարկվող կարգավորումներով հրազեն պահելու և կրելու թույլտվություն ունեցող անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել սառը զենք պահելու համար, այնինչ հրազենի օգտագործումն առավել մեծ վտանգավորություն է ներկայացնում, քան սառը զենքի, իսկ սառը զենք պահելու և կրելու համար թույլտվություն նախատեսված չէ: Ուստի առաջարկվում է չսահմանել քրեական պատասխանատվություն վերոնշյալ զենքի տեսակներն ապօրինի ձեռք բերելու, իրացնելու, փոխադրելու, առաքելու կամ պահելու համար: Առաջարկվում է նաև 1-ին հոդվածի «334» թիվը փոխարինել «334-րդ» բառով՝ համապատասխան փոփոխություններ կատարել նաև այլ հոդվածներին հղում կատարելիս, ինչպես նաև վերանայել ուժի մեջ մտնելու ժամկետը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ փոփոխության ենթարկելով ինչպես հանցագործության առարկան, այնպես էլ սահմանելով հանցակազմի օբյեկտիվ կողմը նկարագրող երկընտրելի մի շարք գործողություններ, նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ խնդրո առարկա փոփոխության մասով ոչինչ նշված չէ: Հետևաբար, հասկանալի չէ, թե հանրային նշանակության ինչ բարիքների դեմ են ոտնձգում գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը: Ընդ որում, նախագծի հեղինակների կողմից չի ներկայացվել նաև որևէ վիճակագրական տվյալ առնչվող հանցագործությունների տեսակների կամ վերլուծական դիտարկումներ դրանք ծնող պատճառների կապակցությամբ, ինչը կպայմանավորեր առաջարկվող փոփոխության հրատապությունը.

2) ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածում ***(հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը)*** առաջարկվող փոփոխությունը կիրառված իրավական տեխնիկայի համանմանությամբ կատարելը արդարացված չէ, քանի որ հրազենի շրջանառությունը սահմանափակված է, ինչը ներկայիս իրավիճակում չենք կարող պնդել գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենքի վերաբերյալ:

Խնդրահարույց է նաև առաջարկվող փոփոխությամբ նախատեսվող «ապօրինի կերպով» եզրույթը: Հաշվի առնելով օրենքի «կանխատեսելիության» և «հասանելիության» վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները՝ նախ անհրաժեշտ է սահմանել գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգ, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլինի անձանց նկատմամբ իրականացնել քրեական հետապնդում առաջարկվող հանցակազմով:

Վերոգրյալի հիման վրա՝ գտնում ենք, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորված չէ, ուստի առաջարկվում է ձեռնպահ մնալ դրանցից:

Բացի այդ՝ ողորկափող հրազենի և օդաճնշիչ զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվությունը նախատեսվել է հրազենի ապօրինի շրջանառության

համար նախատեսված 335-րդ հոդվածով, այնինչ գործող օրենսգրքով այդ առարկաները ներառված են սառը զենքի ապօրինի շրջանառության վերաբերյալ 334-րդ հոդվածի դիսպոզիցիայում:

Նախագծի հիմնավորումներում բացարձակ ոչ մի պատճառաբանություն, հիմնավորում, վերլուծություն չկա, թե ինչով են պայմանավորված քրեական քաղաքականության այս խստացումները:

Առանց այդ հիմնավորումների՝ խստացումներն առնվազն անհասկանալի են, և դրանց անհրաժեշտությունը կասկածի տակ է դրվում:

Կոնկրետ մի օրինակով ներկայացնելու դեպքում անհասկանալի է ընտանիքում, մի քանի անդամներով (խմբով) սառը զենքը տանը պահելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտությունը: Ըստ նախագծի՝ արարքը կհամարվի միջին ծանրության հանցագործություն և կպատժվի մինչև 3 տարի ժամանակով ազատազրկմամբ:

Նույնը կարելի է ասել գազային և ազդանշանային զենքերի դեպքում, ինչպես նաև որսորդական հարթափող հրացանը պահելու համար դրա պատասխանատվությունը հրազենի ապօրինի շրջանառության համար պատասխանատվությանը հավասարեցնելու վերաբերյալ:

Միաժամանակ, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 336-340-րդ հոդվածներում «հրազեն» բառը փոխարինել «զենք» բառով, որը պայմանավորված է «Զենքի շրջանառության մասին» օրենքով հրազենի հասկացության նոր, ոչ հստակ կարգավորումներով:

Քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածները գործող խմբագրմամբ պատասխանատվություն են նախատեսում հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր՝

ա) պատրաստելու, ձևափոխելու, նորոգելու համար (336-րդ հոդված),

բ) դրանց պահպանության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար (337-րդ հոդված),

գ) դրանք հափշտակելու համար (338-րդ հոդված),

դ) դրանք շորթելու համար (339-րդ հոդված),

ե) դրանց մաքսանենգության համար (340-րդ հոդված):

Ըստ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի՝ ինչպես գործող, այնպես էլ նախագծով առաջարկվող խմբագրությամբ՝ զենք է համարվում ոչ միայն հրազենը, այլ նաև գազային զենքը, սառը զենքը, նետողական զենքը, ազդանշանային զենքը և այլն:

Ստացվում է, որ նախագծով առաջարկվում է քրեականացնել հրազենից բացի (օրենսգրքով միայն հրազենի մասով է քրեականացված) զենք հասկացության մեջ մտնող մյուս բոլոր առարկաների (այդ թվում սառը զենքի)՝ ապօրինի պատրաստելը, ձևափոխելը, նորոգելը և այլն:

Նույն խստացումներն առկա են նաև մյուս հոդվածներով:

Այս փոփոխությունների և խստացումների վերաբերյալ ևս նախագծի հիմնավորումներում փաստարկներ, վերլուծություններ չկան, և անհասկանալի է նման խստացումների նպատակահարմարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է նախագծերի փաթեթից հանել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 45-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ հանելով «ծառայողական հաշվեցուցակային» բառերը:

Հարկ է նկատել, որ ներկայումս ՀՀ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով փոփոխություններ են նախատեսված նաև գործող օրենքի 45-րդ հոդվածում: Ուստի, այս կարգավորման անհրաժեշտությունն այլևս բացակայում է, քանի որ վերոհիշյալ նախագծով արդեն իսկ այդ հարցը ստացել է իր կարգավորումը:

«Պետական փուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի վերնագիրը «փոփոխություններ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և լրացումներ» բառերով, քանի որ նախատեսվել են նաև լրացումներ: Նախագծով նախատեսված 1-ին հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նոր լրացվող 26-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ նախատեսված ձևակերպումից պարզ չէ, որ դրանով սահմանվում է պետական տուրքի դրույքաչափ:

Բացի այդ, անհրաժեշտ է ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:

Նախագծի 1-ին հոդվածի 10-րդ մասով նոր լրացվող 26-րդ կետով առաջարկվում է պետական տուրք սահմանել զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների մասին բժշկական հետազոտությունների և դրանց բացակայության մասին տրվող եզրակացության համար: Հարկ է նշել, որ գործող օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է պետական տուրքի հասկացությունը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Նույն օրենքի 7-րդ հոդվածով սպառիչ ներկայացված են պետական տուրքի գանձման օբյեկտները:

«Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ զենք պահելու և կրելու կամ զենքի հավաքածու կազմելու թույլտվություն ունեցող քաղաքացին յուրաքանչյուր հինգ տարին մեկ պարտավոր է անցնել համապատասխան բժշկական հետազոտություն՝ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայության կամ բացակայության վերաբերյալ, որի

արդյունքները տվյալ բժշկական կազմակերպության կողմից էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերում նշված են նաև զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին դիմողին տրվող բժշկական եզրակացությունը և պետական տուրքի վճարման անդորրագիրը՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով:

Վկայակոչված իրավանորմերից հետևում է, որ պետական տուրքը ֆիզիկական և իրավաբանական անձանցից գանձվում է բացառապես պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայության կամ բացակայության վերաբերյալ հետազոտությունն անցկացնում է և զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին բժշկական եզրակացությունը տրամադրում է համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը, ինչպես նաև այն, որ «Պետական տուրքի մասին» օրենքի տեսանկյունից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը չի հանդիսանում պետական մարմին և պետական տուրքի գանձման օբյեկտ՝ անհրաժեշտ է վերանայել նախագծով առաջարկվող կարգավորումը՝ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների մասին բժշկական հետազոտությունների և դրանց բացակայության մասին տրվող եզրակացության համար պետական տուրք սահմանելու մասով:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով համապատասխան փոփոխությունները կատարվում են «Պետական տուրքի մասին» օրենքի 19.1-ին հոդվածում, որով սահմանված են բացառապես «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված լիցենզիաներ և թույլտվություններ տալու և դրանց գործողության ժամկետները երկարաձգելու համար պետական տուրքի դրույքաչափերը, ուստի զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների մասին բժշկական հետազոտությունների և դրանց բացակայության մասին տրվող եզրակացության

համար պետական տուրք սահմանելու վերաբերյալ կարգավորումը դուրս է հոդվածի կարգավորման առարկայի շրջանակից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1-ին հոդվածը «8-րդ հոդվածի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «1-ին մասի» բառերով:

«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագիծն առաջարկվում է լրացնել նոր հոդվածներով, մասնավորապես՝

1) օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «որսորդական» բառն առաջարկվում է փոխարինել «քաղաքացիական» բառով.

2) օրենքի 21-րդ հոդվածում «օրենքով սահմանված կարգով քաղաքացիական սառը զենք» բառերն առաջարկվում է փոխարինել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ և 8-րդ կետերով սահմանված զենքի տեսակներով:

Վերոնշյալ առաջարկներից ելնելով՝ անհրաժեշտություն կառաջանա նախագծի վերնագրի «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով:

«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1-ին հոդվածը «Ոստիկանությունը» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «1.» թվով:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ինկասացիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»

օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Փոստային կապի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերում «(այսուհետ՝ Օրենք)» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ առաջին կիրառումից հետո հետագայում չեն կիրառվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ

N 1222-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում

«Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0) քննար-

կելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ
30.11.2023

ՆԱԽԱԳԻԾ

Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-368-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը «ծառայողական» բառը հանել:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) ռազմական նշանակության արտադրանք՝ զենք, ռազմամթերք, ռազմական տեխնիկա, ռազմական նշանակության գույք, ռազմական աշխատանքներ եւ ծառայություններ, ռազմական, կրթական, ռազմատեխնիկական կամ ռազմակիրառական գիտական կամ ռազմական նշանակության համար կիրառվող տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունքներ, ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն).

2) զենք՝ սարք կամ առարկա, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար: Զենք չեն համարվում արտաքին տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային եւ դեկորատիվ նշանակություն.

3) ձեռքի հրաձգային զենք՝ (այսուհետ՝ հրազեն)՝ վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին (ուղղորդված շարժում ստացած նետվող առարկայի միջոցով) տարածության վրա գտնվող

կենդանի կամ այլ նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, իրանը, փողատուփը, թմբուկը, փակաղակը, հարվածային մեխանիզմը:

4) կարճ ակոսափող հրազեն՝ 300 մմ-ից պակաս երկարություն ունեցող ակոսափող եւ 800 մմ-ից պակաս ընդհանուր երկարություն ունեցող հրազեն.

5) ողորկափող հրազեն՝ հրազեն, որն ունի միայն ողորկ անցուղով փող կամ փողեր.

6) ակոսափող հրազեն՝ հրազեն, որն ունի միայն ակոսավոր անցուղով փող կամ փողեր.

7) սառը զենք՝ կտրող, ծակող, ջարդող սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջական շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խոցելու եւ վնասազերծելու համար.

8) նետողական զենք՝ սարք, որը նախատեսված է մարդու մկանային ուժի կամ մեխանիկական սարքի օգնությամբ նպատակաուղղված շարժում ստացող՝ նետման համար հարմարեցված առարկաների (այսուհետ՝ նետվող հարմարանք) միջոցով հեռավորության վրա գտնվող մարդուն կամ այլ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու եւ վնասազերծելու համար.

9) օդաճնշիչ զենք՝ սարք, որը նախատեսված է սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող հարմարանքին 7,5 ջոուլ եւ դրանից ավել փողային էներգիա ու նպատակաուղված շարժում հաղորդելու միջոցով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու եւ վնասազերծելու համար.

10) Օդաճնշիչ սարք՝ սարք, որը նախատեսված է սեղմված օդի կամ գազային նյութի էներգիայի հաշվին նետվող հարմարանքին մինչեւ 7,5 ջոուլ փողային էներգիա ու նպատակաուղված շարժում հաղորդելու միջոցով նշանակետ խոցելու համար.

11) ռազմամթերք՝ նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաներ, սարքեր եւ նետվող հարմարանքներ, որոնք պարունակում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր, կամ դրանց համակցություն: 12) փամփուշտ՝ զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոց (հրապատիճ), նետողական լիցք (վառոդ) եւ նետվող հարմարանք (գնդակ, կոտորակ եւ այլն).

13) զենքի շրջանառություն՝ զենքի արտադրություն, առեւտուր, վաճառք, հարդարում, նորոգում, փոխանցում, ձեռքբերում, հավաքածուների կազմում եւ դրանց ցուցադրում, հաշվառում, պահպանում, պահում, կրում, տեղափոխում (փոխադրում), օգտագործում, նվիրատվություն, ժառանգում, ոչնչացում, ներկրում Հայաստանի Հանրապետության տարածք եւ արտահանում Հայաստանի Հանրապետությունից (այսուհետ համապատասխանաբար՝ ներկրում եւ արտահանում), տարանցիկ փոխադրում եւ առեւտրի միջնորդական գործունեություն.

14) զենքի արտադրություն՝ լիցենզիայի հիմքով՝ արտադրական գործընթացում զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների եւ ռազմամթերքի հետազոտություն, մշակում, նորոգում, փորձարկում, պատրաստում, հավաքում, ռազմամթերքի, փամփուշտների, պարկուճների, դրանց բաղադրիչ մասերի պատրաստում.

15) զենքով պարգեւատրում՝ սույն օրենքով սահմանված անձանց կողմից օրենքով վերապահված իրենց լիազորությունների շրջանակում սահմանված կարգով տրվող խրախուսանքի տեսակ.

16) զենքի պարագաներ՝ զենքի կոթը, նշանոցը, պահեստատուփը, մաքրման հարմարանքները, բոցամարիչի եւ փողաբերանի արգելակի փողհատուցիչի տեսակները կամ այն լրասարքը, որը նախագծված կամ հարմարեցված է զենքը տեղադրելու, փոխադրելու կամ զենքին կցելու, ամրացնելու միջոցով օպտիկական, գիշերային կամ ջերմատեսիլ սարքի միջոցով զենքի նշանառության հնարավորությունները բարելավելու համար: Զենքի պարագա է համարվում նաեւ զենքի ցանկացած այլ լրասարք, որը չի համարվում զենքի հիմնական բաղկացուցիչ մաս կամ չի փոխարինում դրան.

17) զենք պահել՝ զենքին տիրապետում՝ զենք պահելու եւ կրելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրում, զենք պահելու եւ օգտագործելու թույլտվություն ունեցող իրավաբանական անձի գտնվելու վայրում՝ զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների պահպանմամբ.

18) զենք կրել՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս, առանց տեղափոխելու կանոնների կիրառմամբ, զենքի տեղաշարժն անձի վրա ամրացված, կախված, պայուսակում կամ գրպանում դրված կամ ձեռքում բռնած վիճակում, իսկ նետողական զենքի դեպքում՝ նետման համար նախատեսված եւ դրա վրա տեղադրված նետվող հարմարանքով.

19) զենք տեղափոխել (փոխադրել)՝ պահելու համար նախատեսված տարածքից դուրս զենքի տեղաշարժը լիցքաթափված վիճակում, ապահովիչ դետալը փակ, առանձնացված կամ դատարկ (առանց փամփուշտ) պահեստատուփով, ծածկաշապիկով կամ պատյանով կամ տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով, նետողական զենքի դեպքում՝ փաթեթավորված եւ անձի վրա չամրացված վիճակում, իսկ նետվող հարմարանքը պետք է լինի առանձնացված.

20) ուսումնական զենք՝ ուսումնական նպատակների համար օգտագործվող սարք կամ առարկա, որը հնարավոր չէ վերանորոգելով դարձնել կրակելու համար պիտանի, ուսումնական զենքի նմանակ կարող է հանդիսանալ նաեւ մալած զենքը.

21) զենքի նորոգում՝ զենքի հիմնական մասերը կամ այլ դետալները փոխելու կամ վերանորոգելու միջոցով զենքն աշխատունակ դարձնելը, որի դեպքում զենքի մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

22) զենքի հարդարում՝ զենքի գեղարվեստական ձեւավորում, որի դեպքում զենքի դետալները եւ մարտավարատեխնիկական բնութագրերը չեն փոխվում.

23) զենքի հավաքածու՝ ընտրված զենքերի ամբողջություն, որը կարող է ունենա սիրողական, ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային եւ տեղեկատվական նշանակություն.

24) մալած զենք՝ կրակելու համար ոչ պիտանի դարձրած զենք.

25) զենքի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարան՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի լիազոր մարմնի կողմից վարվող՝ շրջանառվող

քաղաքացիական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի եւ փամփուշտների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգ.

26) գազային զենք՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված փամփուշտներով ատրճանակի կամ ռեւոլվերի նմանվող սարք, դրանց փամփուշտները կամ փչող (ցրող) սարք, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ ժամանակավորապես վնասազերծելու համար.

27) գազային փամփուշտ՝ կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, խցանը եւ Կառավարության սահմանած՝ օգտագործման թույլատրված արցունքաբեր կամ գրգռիչ նյութը, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.

28) լուսաձայնային փամփուշտ՝ կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը) եւ լուսաձայնային գործողության լիցքը, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար.

29) ուսումնական փամփուշտ՝ ուսումնական նպատակների համար օգտագործվող համասարք՝ բաղկացած պարկուճից եւ բռնկվող լիցքից նետվող առարկայից, որը պատրաստված է բնօրինակի չափերին եւ կառուցվածքին համապատասխան, եւ որի պարկուճի մեջ բացակայում է նետողական լիցքը, կամ այն փոխարինված է նույն կշռով այլ՝ ոչ այրվող նյութով, իսկ բռնկվող միջոցը (հրապատիճը) վնասված (կրակված) է: Ուսումնական փամփուշտի պարկուճի վրա պետք լինեն տարբերակիչ սեղմվածքներ:

30) անգնդակ փամփուշտ՝ միայն ուսումնական, վարժանքային կամ ազդանշանային կրակոցներ կատարելու նպատակով օգտագործվող համասարք, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար, եւ որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը, եւ որի կազմի մեջ բացակայում է նետվող առարկան, կամ առկա է հեշտ ոչնչացվող նյութից (պոլիմեր, թուղթ) փոխարինողը.

31) պայթուցիկ նյութ՝ արտաքին ազդեցության պայմաններում պայթելու ունակ քիմիական նյութ կամ նյութերի խառնուրդ.

32) պայթեցման սարք՝ հատուկ պատրաստված եւ որոշակի պայմաններում պայթելու ունակ ցանկացած սարք.

33) ազդանշանային զենք՝ սարք, որը նախատեսված է անգնդակ փամփուշտով լուսային, ծխային կամ ձայնային ազդանշան արձակելու համար.

34) ազդանշանային փամփուշտ՝ զենքից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը եւ նետվող լիցքը՝ լուսային, ձայնային կամ ծխային ազդանշան տալու համար, որը նախատեսված չէ կենդանի կամ այլ նշանակետի խոցման համար.

35) վառոդ՝ տարբեր բաղադրամասերից բաղկացած պայթուցիկ խառնուրդ, որը կարող է այրվել ըստ իր շերտերի զուգահեռության՝ առանց արտաքին միջավայրից թթվածնի

ներթափանցման: Վառոդի՝ ըստ շերտերի զուգահեռության այրումը, որը չի վերածվում պայթյունի, այլ առաջ է բերում կայուն գազագոյացություն, հնարավորություն է տալիս կանոնավորելու գազագոյացման արագությունը.

36) էլեկտրահարող սարք՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ատրճանակի նմանվող սարք, կայծային պարպիչ եւ այլ կրովի էլեկտրահարող սարք, որոնք նախատեսված են կենդանի նշանակետը ժամանակավորապես վնասազերծելու համար.

37) սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն՝ կարճափող զենք եւ անփող զենք՝ նախատեսված վնասվածքային գործողության փամփուշտի, վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին ուղղորդված շարժում ստացած արկի միջոցով տարածության վրա գտնվող կենդանի նշանակետի մեխանիկական խոցման՝ վնասազերծման համար, որը նախատեսված չէ մահ պատճառելու համար.

38) վնասվածքային գործողության փամփուշտ՝ ողորկափող հրազենից կամ սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենից կրակելու համար նախատեսված համասարք, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոցը (հրապատիճը), նետողական լիցքը եւ վնասվածքային գործողության նետվող առարկան, որը նախատեսված չէ մարդուն մահ պատճառելու համար.

39) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք՝ կազմակերպություններ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են զենք օգտագործելու կամ գործադրելու հետ.

40) պետական ռազմականացված կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային եւ մաքսային մարմիններ, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե, Հայաստանի Հանրապետության դատախազություն, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայություն, պետական սուրհանդակային ծառայություն.

41) հրաձգարան՝ իրավաբանական անձանց պատկանող շինություն, տարածք կամ հողատարածք (այսուհետ՝ տարածք), որը հարմարեցված է հրաձգության համար: Հրաձգարանները կարող են լինել բաց, կիսափակ եւ փակ.

42) հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի լիազոր մարմնի կողմից վարվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված չբացահայտված հանցագործությունների դեպքի վայրերից վերցված (հայտնաբերված) ակոսափող հրազեններից կրակված պարկուճների, գնդակների եւ զենքի հետքեր ունեցող փամփուշտների, Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառվող ակոսափող զենքի (մինչեւ 12,7 մմ տրամաչափի), ինչպես նաեւ առգրավված, հայտնաբերված, կամավոր հանձնված, կորած (հափշտակված) զենքերի ձգաբանական հետազոտման ենթարկված եւ նմուշառված՝

գնդակների, պարկուճների հավաքածու, որտեղ հաշվառումն իրականացվում է բնօրինակներով եւ էլեկտրոնային եղանակով.

43) համապատասխանության գնահատում՝ սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի կողմից համապատասխանության հավաստման գործունեության իրականացում, որի արդյունքով տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող քաղաքացիական զենքի փամփուշտների եւ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի համապատասխանության գնահատման փաստաթղթի տրամադրմամբ հավաստվում է համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին.

44) համապատասխանության սերտիֆիկատ՝ սույն օրենքի իմաստով՝ հավատարմագրված եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված համապատասխանության գնահատման մարմնի տված փաստաթուղթ, որը հավաստում է արտադրանքի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տեխնիկական կանոնակարգով) եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով սահմանված պահանջներին:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «զենք համարվող հրազենը» բառերը փոխարինել «զենքն իր կառուցվածքով» բառերով.

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Քաղաքացիական զենքի տեսակներն են՝

1) ողորկափող հրազեն, այդ թվում՝ 140 մմ-ից ոչ ավելի երկարության ակոսավոր մասով.

2) համակցված հրազեն, այդ թվում՝ փոփոխվող, ներդրվող ակոսավոր փողով.

3) ակոսափող հրազեն՝ 1500 մմ-ից ոչ ավել երկարություն եւ 12.7 մմ-ից ոչ ավել տրամաչափ ունեցող փողով.

4) կարճ ակոսափող հրազեն.

5) օդաճնշիչ զենք՝ ոչ ավելի, քան 25 ջոուլ փողային էներգիայով.

6) գազային զենք.

7) ազդանշանային զենք.

8) սառը զենք.

9) նետողական զենք»:

Հոդված 5. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 5. Քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը*

1. Քաղաքացիական կարճ ակոսափող հրազենը (այսուհետ՝ Կարճ ակոսափող հրազեն) նախատեսված է պետական մարմինների եւ կազմակերպությունների պաշտոնատար անձանց, պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայողների (ծառայածների) կամ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների համար, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է պահել եւ կրել, պահել եւ օգտագործել այդ զենքը օրենքով նրանց վրա դրված՝ ինքնապաշտպանության, քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի, բնական պաշարների, արժեքավոր եւ վտանգավոր բեռների, հատուկ թղթակցության պահպանության պարտականությունների կատարման համար:

2. Անձնական օգտագործման համար ընդամենը մեկ միավոր կարճ ակոսափող հրազեն ձեռք բերելու իրավունք ունի պետական ռազմականացված կազմակերպություններում առնվազն 20 տարի զինվորական ծառայության ստաժ ունեցող եւ առնվազն «փոխգնդապետ» զինվորական կոչում ունեցող գործող կամ պահեստազորի սպան.

3. Կարճ ակոսափող հրազենի փամփուշտի գնդակը չի կարող ունենալ կարծր նյութերից բաղկացած միջնաձող:

4. Օրենսդրության համաձայն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք իրավունք ունեն ժամանակավոր օգտագործման համար ստանալու կարճ ակոսափող հրազեն՝ Կառավարության սահմանած կարգով:

5. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց Կարճ ակոսափող հրազենը տրվում է պահելու եւ օգտագործելու, իսկ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ պահելու եւ կրելու իրավունքով:

6 Հրաձգարան գործարկելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց Կարճ ակոսափող հրազեն տրվում է պահելու եւ օգտագործելու իրավունքով:

7. Օրենքով նախատեսված դեպքերում այլ մարմինների ղեկավար աշխատողների եւ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից Կարճ ակոսափող հրազեն օգտագործելու դեպքում այն տրվում է պահելու եւ կրելու իրավունքով:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Մարտական է համարվում այն զենքը, որը նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար եւ օրենսդրությանը համապատասխան ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների

սպառազինության մեջ, բացառությամբ քաղաքացիական զենքի: Մարտական զենքը քաղաքացիական զենքից տարբերվում է քաղաքացիական զենքի տեսակների՝ սույն օրենքով սահմանված չափանիշներից եւ կրակահերթով կրակելու հնարավորությամբ:»:

2) 3-րդ մասում «Պետական ռազմականացված կազմակերպություններում» բառերը հանել:

Հոդված 7. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «եւ ծառայողական» շաղկապն ու բառը հանել.

2) 1-ին մասի 1-ին կետը «ունակության կորստի» բառերից հետո լրացնել «բացառությամբ կարճ ակոսափող հրազենի» բառերը.

3) 1-ին մասի 2-րդ կետի «ինքնաշեն հրազեն» բառերը փոխարինել «ինքնաշեն զենք» բառերով, «նմանեցված հրազեն» բառերը «նմանեցված զենք» բառերով.

4) 1-ին մասի 5-րդ կետում «սարք» բառը փոխարինել «զենք» բառով.

5) 1-ին մասի 8-րդ կետում «երեք» բառը փոխարինել «մեկ» բառով.

6) 1-ին մասի 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«90 մմ-ից ավել երկարության շեղբով կամ սայրով սառը զենք, դանակ կամ դաշույն, որի շեղբը կամ սայրը դուրս է գալիս բռնակից հատուկ կոճակը կամ լծակը սեղմելու միջոցով կամ ծանրության ուժի կամ արագացված շարժման ազդեցությամբ եւ ինքնաբերաբար ամրակցվում, բացառությամբ մշակութային արժեք ունեցող, այդ թվում՝ պատմական նշանակություն ունեցող սառը զենքի, դանակի կամ դաշույնի, դրանց պատճենների եւ կրկնօրինակների.»:

7) 2-րդ մասի 1-ին կետը «էներգիայով եւ» բառն ու շաղկապը փոխարինել «էներգիայով կամ» բառով եւ շաղկապով.

8) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) քաղաքացիական զենքի վրա անաղմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելը.».

9) 2-րդ մասի 10-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

9) 2-րդ մասի 11-րդ կետում «5000» թիվը փոխարինել «3000» թվով, «հրաձգարանների» բառից հետո լրացնել «եւ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի» բառերը:

Հոդված 8. Օրենքի 8-րդ հոդվածի վերնագրում, 1-ին, 2-րդ մասերում, 3-րդ մասի 2-րդ կետում «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել».

Հոդված 9. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Քաղաքացիական եւ ծառայողական» բառերը փոխարինել «Ռազմական նշանակության արտադրանքի արտադրությունը, Ռազմական նշանակության

արտադրանքի տարանցիկ փոխադրումը եւ առեւտրի միջնորդական գործունեությունը» բառերով.

2) 2-րդ, մասում «Քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել.

3) 3-րդ մասում «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել:

Հոդված 10. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի «քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել.

2) 2-րդ մասի «փամփուշտներ» բառը հանել.

3) 3-րդ մասի 8-րդ կետը «մարտական կամ ծառայողական» բառերը հանել.

4) 4-րդ մասի 1-ին կետը «թույլտվություն» բառը փոխարինել «թույլտվություններ» բառով.

5) 5-րդ մասը «քաղաքացիական հրազեն» բառերը փոխարինել «զենք» բառով.

6) 9-րդ մասը «օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «որի ժամանակ ստուգվում է նաեւ քաղաքացու մշտական բնակության վայրում զենքի պահպանման պայմանների առկայությունը» նախադասությունը.

7) 11-րդ մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

8) 11-րդ մասի 5-րդ կետը «եզրակացությունը» բառից հետո լրացնել «եթե տվյալ պահին իր անունով հաշվառված զենք չունի» նախադասությունը.

9) 11-րդ մասի 7-րդ կետը «զենքի» բառից առաջ լրացնել «առաջին անգամ զենք ձեռք բերելիս» բառերը:

10) 13-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«13. Թույլտվությունների ժամկետները երկարաձգելիս կամ զենք պահելու եւ կրելու թույլտվություն ունենալու դեպքում նոր զենք ձեռք բերելիս Հայաստանի Հանրապետության քաղաքացին ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում միայն սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ եւ 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը»:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «մյուս» բառը հանել.

2) 1-ին մասի 5-10-րդ կետերը հանել.

3) լրացնել նոր՝ 1.1. մասով հետեւյալ խմբագրությամբ.

«1.1. Թույլտվություններն ուժը կորցրած են ճանաչվում նաեւ հետեւյալ դեպքերում՝

1) ֆիզիկական անձը հաշվառվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տալու կամ ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու համար.

2) ֆիզիկական անձը հաշվառվել է հոգեբուժական կամ նարկոլոգիական հաստատություններում կամ ձեռք է բերել զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ եւ վիճակներ.

3) ֆիզիկական անձը չի անցել սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բժշկական հետազոտությունը.

4) ֆիզիկական անձը մեկ տարվա ընթացքում երկու անգամ թույլ է տվել հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտում.

5) ֆիզիկական անձը դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, եւ դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով:».

4) 2-րդ մասի «համապատասխան լիցենզիայից» բառերից հետո լրացնել «եւ թույլտվությունից» շաղկապով եւ բառով .

5) 4-րդ մասը «դադարեցման» բառից հետո լրացնել «կասեցման» բառով.

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «գործողությունները» բառից հետո լրացնել «կասեցվել կամ» բառը եւ շաղկապը.

2) 1-ին մասի 3-րդ կետը «կամ փաշփուշտներ» բառից առաջ լրացնել «հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր» բառերը.

3) 1-ին մասի 5-րդ կետը «քաղաքացիական կամ ծառայողական զենքի կամ որպես պարգեւ տրված» բառերը հանել.

4) 3-րդ մասը «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել.

5) 9-րդ մասը «զենքի» բառից հետո լրացնել «հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի» բառերը:

Հոդված 13. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել,

2) 1-ին մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3) 2-րդ մասը «զենք» բառից հետո լրացնել «եւ փամփուշտներ» շաղկապը եւ բառը:

Հոդված 14. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 1-ին եւ 2-րդ մասերը «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել.

2) 6-րդ մասը «ոստիկանությունից ստացել զենք» բառերից հետո լրացնել «պահելու եւ» բառը եւ շաղկապը, «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:

Հոդված 15. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «զենքի այլ» բառերը փոխարինել «մարտական զենքի» բառերով:

2) 6-րդ մասը «Քննությունից ազատվում է այն քաղաքացին, որը ծառայում է Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում եւ ունի զենք պահելու եւ կրելու իրավունք:» նախադասությունը փոխարինել «Գործնական քննությունից ազատվում են այն քաղաքացիները, որոնք ծառայում են կամ ծառայել են Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում, այդ թվում՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցածները, որոնք ունեն կամ ունեցել են զենք կրելու իրավունք:».

2) 7-րդ մասի 5-րդ կետը «քրեական հետապնդում» բառերից հետո լրացնել «զենքի օգտագործմամբ», իսկ «զենքի օգտագործմամբ» բառերը հանել.

Հոդված 16. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրում եւ 1-ին մասում «քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել.

2) 2-րդ մասը «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել:

Հոդված 17. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) Վերնագրում, 1-ին եւ 2-րդ մասերում «քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել.

2) լրացնել նոր՝ 3-րդ մասով հետեւյալ խմբագրությամբ.

«3. Գիտական կազմակերպությունները զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, փամփուշտների եւ ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում իրականացնում են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության սահմանած կարգով՝ առանց զենքի արտադրության լիցենզիայի:»:

Հոդված 18. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) վերնագրում, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 11-րդ մասերում «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել.

2) 4-րդ մասում «մեկ միավոր զենք» բառերից հետո լրացնել «մեկ միավոր հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս» բառերը:

2) 8-րդ, մասում «քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել.

Հոդված 19. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) վերնագրում, 1-ին մասում, 1-ին մասի 1-ին, 9-րդ կետերում, 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերում, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերում «եւ ծառայողական» բառը եւ շաղկապը հանել.

2) 1-ին մասում «իրավունք ունեն» բառերից հետո «քաղաքացիական» բառը հանել.

3) 1-ին մասի 1-ին կետը «սերտիֆիկատ» բառից հետո լրացնել «ակոսափող զենքի դեպքում՝ նաեւ գնդակապարկուճային հաշվառման մասին տեղեկանք» բառերը.

4) 1-ին մասի 2-րդ կետը «զենք ձեռք բերելու թույլտվություն» բառերը փոխարինել «թույլտվությունը» բառով.

5) 1-ին մասի 4-րդ կետում «,ծառայողական» կետադրական նշանը եւ բառը հանել.

6) 1-ին մասի 5-րդ կետում «տվյալները» բառից հետո լրացնել «ակոսափող զենքի դեպքում՝ նաեւ գնդակապարկուճային հաշվառման մասին տեղեկանքի պատճենը» բառերը, «ոստիկանությունից» բառից հետո լրացնել «զենք պահելու եւ կրելու կամ պահելու եւ օգտագործելու» բառերը.

7) 1-ին մասի 6-րդ կետում «տրամադրել» բառից հետո լրացնել «կամ վաճառել փամփուշտներ» բառերը», «տրամադրած՝» բառից հետո լրացնել «համապատասխան» բառը, լրացնել նոր նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ. «հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառել հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվության առկայության դեպքում.».

8) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«քաղաքացիական զենք վաճառելը տվյալ տեսակի զենք ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր վաճառելը՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու թույլտվություն չներկայացրած, փամփուշտներ վաճառելը՝ տվյալ տեսակի զենք պահելու եւ կրելու կամ պահելու եւ օգտագործելու թույլտվություն չներկայացրած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.».

Հոդված 20. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) վերնագրում, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերում «եւ ծառայողական» բառը եւ շաղկապը հանել.

2) 1-ին մասում «նորոգելու իրավունք ունեն» բառերից հետո «քաղաքացիական» բառը հանել.

3) 2-րդ, 3-րդ մասերում «քաղաքացիական» բառը հանել.

Հոդված 21. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «իսկ քաղաքացիական» բառից հետո «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել, «զենքը վաճառելու» բառերից հետո «քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել, «առեւտրի» բառից առաջ լրացնել «քաղաքացիական զենքի» բառերը.

2) 2-րդ մասը «մարտական եւ ծառայողական» բառերը հանել:

Հոդված 22. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) Վերնագրում, 1-ին մասում «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել, «դրանց» բառը հանել:

2) 9-րդ մասում «փամփուշտների» բառից հետո լրացնել «վերալիցքավորումը եւ» բառը եւ շաղկապը.

3) 10-րդ մասում «Քաղաքացիական եւ ծառայողական» բառերը հանել, «փամփուշտների» բառից հետո լրացնել «վերալիցքավորում եւ» բառը եւ շաղկապը:

Հոդված 23. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 24. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը «21» թիվը փոխարինել «18» թվով.

1) 5-րդ մասը «համապատասխան պետական մարմինների» բառերը փոխարինել «պետական ռազմականացված կազմակերպությունների» բառերով:

2) 16-րդ մասի 2-րդ կետը, 21-րդ մասը «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել:

Հոդված 25. Օրենքի 29-րդ հոդվածի վերնագրում, 1-ին, 3-րդ մասերում «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել:

Հոդված 26. Օրենքի 31-րդ հոդվածում՝

1) 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ մասերը «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել:

2) 3-րդ մասը «համաձայն» բառից հետո լրացնել «, որից հետո ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրվում է համապատասխան տեղեկանք՝ զենքի հաշվառման վերաբերյալ» նախադասությունը.

3) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Չհաշվառված քաղաքացիական զենքերը քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին կամովին ներկայացվելու դեպքում, համապատասխան քրեադատավարական ընթացակարգով անցնելուց եւ վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում կայացվելուց եւ օրենքով սահմանված կարգով զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը զենքը հաշվառում եւ տրամադրում է քաղաքացուն՝ զենք պահելու եւ կրելու իրավունքով:»:

4) 12-րդ մասը «եւ քաղաքացին դրանք առանց թույլտվության կարող է ձեռք բերել միայն քաղաքացիական եւ ծառայողական զենքի առեւտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանցից:» նախադասությունը փոխարինել «եւ դրանք վաճառելու իրավունք ունեն միայն քաղաքացիական զենքի առեւտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:» նախադասությամբ:

Հոդված 27. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 1-ին եւ 3-րդ մասերը «եւ ծառայողական» շաղկապը եւ բառը հանել.

2) 3-րդ մասի 2-րդ կետը «մեկ» բառից հետո լրացնել «անգամ» բառով.

3) 3-րդ մասի 3-րդ կետը «մեկ» բառից հետո լրացնել «անգամ» բառով:

Հոդված 28. Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) 5-րդմասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ակոսափող հրազենի համար նախատեսված բաց, կիսափակ եւ փակ հրաձգարանները պետք է սարքավորվեն անվտանգության կանոններին համապատասխան: Բաց հրաձգարանը պետք է ունենա նաեւ գնդակի արգելակման խոչընդոտներ: Բաց հրաձգարանի կրակագծից՝ կրակ բացելու ուղղությամբ մինչեւ բնակելի, պետական, հասարակական եւ արտադրական շինություններ պետք է լինի առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում հատակագծային սահմանից մինչեւ բնակավայր, բնակելի, պետական, հասարակական եւ արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորություն:»:

2) 10-րդ մասի «ուսումնական, սիրողական, սպորտային վարժանքների, հրաձգության եւ տակտիկական պարապմունքների, մրցումների անցկացման պահանջները» բառերը հանել:

3) լրացնել նոր՝ 11-րդ մաս հետեւյալ խմբագրությամբ.

«11. Արգելվում է կառուցել, նախագծել բաց հրաձգարանի կրակագծից՝ կրակ բացելու ուղղությամբ մինչեւ բնակավայր, բնակելի, պետական, հասարակական եւ արտադրական շինություններ առնվազն 3000 մետր, իսկ կիսաբաց հրաձգարանների դեպքում հատակագծային սահմանից մինչեւ բնակավայր, բնակելի, պետական, հասարակական եւ արտադրական շինություններ՝ առնվազն 300 մետր հեռավորությամբ: Հրաձգարանների վրայով քաղաքացիական ավիացիայի անվտանգ թռիչքների նորմերը սահմանում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Հոդված 29. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Օրենսդրական նախաձեռնության խնդիրները եւ նպատակները.

2022 թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց, իսկ 2022 թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրվեց «Զենքի շրջանառության կարգավորման» մասին օրենքը, որը նախատեսվում է պաշտոնապես ուժի մեջ է մտնել 2023 թ. հունիսի 1-ից եւ իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների կարգավորման եւ անվտանգային համակարգի զարգացման կարեւոր ձեռքբերումներից մեկը:

2022 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ վարչապետի N 1562-Ա որոշմամբ հաստատվեց «Զենքի շրջանառության կարգավորման մասին» եվ «լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրառկումն ապահովող միջոցառումները, որտեղ Օրենսդիրը աշխատանքային կարգով աջակցեց այդ միջոցառումներին: Այդ ընթացքում եւ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, կրկին խորքային ուսումնասիրվեցին նոր օրենսդրության մի շարք դրույթները, որոնք, ըստ էության, կարող են որոշակի խոչընդոտներ ստեղծել նոր օրենքի կիրառման ընթացքում եւ Օրենսդիրը նախաձեռնեց նոր օրենսդրությունը լավարկելու նպատակով հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների հիմնական նպատակը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում զենքի շրջանառության կապակցությամբ ծագող հարաբերությունները, որոնք ուղղված են քաղաքացու ինքնապաշտպանության իրավունքի օրենսդրական կարգավորմանը՝ պատշաճ պաշտպանական միջոցների հասանելիության միջոցով, սեփականության իրավունքի, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից քաղաքացիական զենքի օգտագործման պայմանների իրավական կարգավորումը:

Օրենդրական փոփոխությունները պետք է կանոնակարգեն նոր ստեղծվող իրավահարաբերությունները քաղաքացիական զենքի շրջանառության ոլորտում, կարգավորեն եւ ներդնեն նոր իրավահարաբերություններ, որոնք ուղղված են

տնտեսության, սպորտի եւ հրաձգության զարգացման, հնարավոր կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման, ինքնապաշտպանության եւ անօրինական զենքի քանակի նվազեցման եւ ստվերային շրջանառությունից աստիճանաբար դուրս բերմանը:

2. Օրենքի ընդհանուր նկարագիրը եւ առանցքային դրույթները

Նախագծում առաջին փոփոխությունը վերաբերում է «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածին, որտեղ կարգավորվել են որոշ հիմնական հասկացությունների բացատրությունները եւ լրացվել են նորերը, մասնավորապես՝ ռազմական նշանակության արտադրանք, ողորկափող հրազեն, ակոսափող հրազեն:

Օրենքի 5-րդ հոդվածը ներկայացնում է «ծառայողական զենքի»-ի հետ կապված իրավահարաբերությունները: Հաշվի առնելով, որ ծառայողական զենքը տարբերվում է մարտական եւ քաղաքացիական զենքից ընդամենը փամփուշտների տարբերությամբ, նպատակահարմար է գտնվել ծառայողական զենք հանդիսացող կարճ-ակոսափող հրազենը, որը զուրկ է կրակահերթով կրակելու հնարավորությունից դարձնել քաղաքացիական նշանակության զենք, սակայն այն նույն սահմանափակումներով, որը որ նախատեսված էր ծառայողական զենքի համար: Դրանով է նաեւ պայմանավորված օրենքի 3-րդ հոդվածի փոփոխությունը, որով առաջարկվում է զենքը բաժանել 2 տեսակի՝ քաղաքացիական եւ մարտական:

Գործող օրենքով ծառայողական զենք (նոր կարգավորմամբ՝ քաղաքացիական կարճ ակոսափող հրազեն) ձեռք բերելու իրավունք ունի 20 տարվա զինվորական ստաժ ունեցող եւ առնվազն «գնդապետ» զինվորական կոչում ունեցող գործող կամ պահեստազորի սպան: Նոր կարգավորմամբ առաջարկվում է «գնդապետ» զինվորական կոչումը մեկ աստիճանով իջեցնել եւ հնարավորություն ընձեռել նաեւ «փոխգնդապետ» զինվորական կոչում ունեցողներին՝ հաշվի առնելով նրանց երկարամյա ծառայության փորձը եւ զենքի հետ վարվելու ունակությունները եւ պատասխանատվությունը:

Օրենքի 6-րդ մասի 1-ին մասը սահմանում է մարտական զենքի հասկացությունը, «Մարտական զենք է համարվում ռազմական նշանակության այն արտադրանքը, որը, օրենսդրությանը համապատասխան, ընդունված է օգտագործել պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ եւ նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար: Մարտական զենքը կարող է ունենալ կրակահերթով կրակելու հնարավորություն:», այս սահմանումը բավականին տարընթերցումների տեղիք է տալիս է, քանի որ ենթադրվում է, որ մարտական է այն զենքը, որը գտնվում է պետական ռազմականացված կազմակերպությունների սպառազինության մեջ: Այդ պատճառով առաջարկվում է հստակ ֆիքսել, որ պետական ռազմականացված կազմակերպություններում օգտագործվող այն զենքերը, որոնք համապատասխանում են օրենքով սահմանված քաղաքացիական զենքի չափանիշներին, ապա դրանք քաղաքացիական զենքեր են:

Օրենքի 7-րդ հոդվածում առաջարկվում են հետեւյալ փոփոխությունները՝ 1-ին մասի 2-րդ կետում կա «ինքնաշեն հրազեն» ձեւակերպումը, որի համար սահմանված է արգելք, նախագծով առաջարկվում է այն փոխարինել «ինքնաշեն զենք» ձեւակերպմամբ, որպեսզի այն վերաբերի զենքի բոլոր տեսակներին: Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 10-րդ կետը, քանի որ այն տեսականորեն կա նաեւ 2-րդ մասի 5-րդ կետում: 2-րդ մասի 11-րդ կետը սահմանում է «ողորկափող հրազեն օգտագործելը բնակավայրերում,

բնակավայրերից, մայրուղիներից, միջպետական եւ միջհամայնքային նշանակության ճանապարհներից 500 մետր, իսկ ակոսափող հրազեն՝ 5000 մետր հեռավորությունից մոտ տարածքում, բացառությամբ հրաձգարանների»: Նախագծով առաջարկվում է ակոսափող հրազենի համար նախատեսված 5000 մետր հեռավորությունը փոխարինել 3000 մետրով, քանի որ կարծում ենք, որ անվտանգության պահպանման համար այս թիվը բավարար է՝ հաշվի առնելով, որ նախկին «Զենքի մասին» օրենքով նմանատիպ սահմանափակում անգամ չկար: Այս կետում առաջարկվում է նաեւ ավելացնել ծայրահեղ անհրաժեշտության կամ ինքնապաշտպանության դեպքերը, քանի որ հաշվի չէր առնվել, որ քաղաքացին կարող է դիմել ինքնապաշտպանության դիցուք՝ բնակավայրում կամ ճանապարհին մոտ հատվածում:

Օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասով առաջարկվում է զենքի հետ կապված եւ անվտանգության կանոնների իմացության տեսական եւ գործնական քննության գործնական բաժնից ազատել նաեւ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցածներին, քանի որ նրանք արդեն իսկ ծանոթ են զենքի հետ վարվելու անվտանգության կանոններին, այդ պատճառով էլ նրանց անհրաժեշտ է հանձնել միայն տեսական քննությունը:

Օրենքի 20-րդ հոդվածում առաջարկվում է լրացնել 3-րդ մաս, որով հնարավորություն է տրվում գիտական կազմակերպություններին զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի եւ ռազմամթերքի հետազոտություն, մշակում, փորձարկում իրականացնելու համար զենքի արտադրության լիցենզիա ձեռք չբերել:

Օրենքում կատարվել են նաեւ մի շարք տեխնիկական փոփոխություններ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագծի մշակման աշխատանքներին ներգրավվել են ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավորներ եւ փորձագետներ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ՀՀ Ներքին գործերի նախարարությունը, ոլորտը ուսումնասիրող մի շարք հասարակական կազմակերպություններ:

4. Նախագծի ընդունման ակնկալվող արդյունքը.

Ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում կարգավորել զենքի եւ ռազմամթերքի շրջանառությունը, նպաստել որսորդության, սիրողական եւ սպորտային հրաձգության, ինչպես նաեւ ռազմամարզության զարգացմանը: Ներդնել զենքի հետ վարվելու մշակույթ, որն ուղղված կլինի քաղաքացիների ինքնապաշտպանության եւ մարտունակության բարձրացմանը: